

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

Կիրվպի, 11 Մարտ 2018

**ՂԱՏԱԻՈՐԻ Կիրվպի
Ե ՔԱՌԱՍՆՆՈՐԴԱՅ /ԹԻԻ 49
SUNDAY, March 11, 2018**

**SUNDAY OF THE JUDGE
5th Sunday of the Period Great Lent /
NO. 49**



TODAY'S BIBLE READINGS

Philippians 3.1-4.9 / Luke 17.20-18.14 /

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ՀԱՅԱՐԻ ՔՀՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ

Celebrant:

REV. FR. HAYARI TANASHIAN

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Murat Demirdogen


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ 3.1-4.9

1Վերջապէս, եղբայրներ՝ ու, ուրախացէ՛ք Տէրոջմով: Արդարեւ նոյն բաները գրել ձեզի՝ ձանձրոյթ չէ ինծի, բայց ապահովութիւն է ձեզի:

2Չգուշացէ՛ք շուներէն, զգուշացէ՛ք չար գործաւորներէն, զգուշացէ՛ք թլփատութենէն. **3**որովհետեւ թլփատութիւնը մե՛նք ենք, որ կը պաշտենք Աստուած Հոգիով եւ կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, ու վստահութիւն չունինք մարմինի վրայ. **4**թէ եւ ե՛ս ալ ունենալու էի նոյն վստահութիւնը մարմինի վրայ: Եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմինի վրայ, ա՛լ աւելի ե՛ս՝ **5**ութերորդ օրը թլփատուած, Իսրայէլի ցեղէն, Բենիամինի տոհմէն, Եբրայեցի մը՝ Եբրայեցիներէն, Օրէնքին համեմատ՝ Փարիսեցի, **6**նախանձախնդրութեան համեմատ՝ եկեղեցին կը հալածէի, Օրէնքէն եղած արդարութեան համեմատ՝ անմեղադրելի էի:

7Բայց ինչ որ շահ էր ինծի, վնաս համարեցի զայն՝ Քրիստոսի համար: **8**Ու նոյնիսկ բոլոր բաներն ալ վնաս կը համարեմ՝ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսի գիտութեան գերազանցութեան համար: Բոլոր բաներէն զրկուեցայ անոր համար, եւ աղբ կը համարեմ զանոնք, որպէսզի շահիմ Քրիստոսը **9**ու գտնուիմ իր մէջ, ունենալով ո՛չ թէ իմ արդարութիւնս՝ որ Օրէնքէն է, հապա ա՛յն՝ որ Քրիստոսի հաւատքին միջոցով է, արդարութիւնը՝ որ Աստուծմէ է՝ հաւատքով. **10**որպէսզի ճանչնամ զինք եւ իր յարութեան զօրութիւնը, ու հաղորդակից ըլլամ իր չարչարանքներուն՝ կերպարանակից դառնալով իր մահուան, **11**որպէսզի կարենամ հասնիլ՝ մեռելներուն յարութեան:

12Ո՛չ թէ ես արդէն ստացած եմ մրցանակը, կամ արդէն կատարեալ եղած եմ. հապա հետամուտ եմ բռնելու զայն, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ: **13**Եղբայրներ՝, ես չեմ սեպեր թէ բռնած եմ: Հապա կ'ընեմ սա՛ մէկ բանը. մոռցած եմ ետեւի եղածները, եւ կը դիմեմ առջեւի եղածներուն: **14**Կը հետապնդեմ նպատակակէտը՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին համար: **15**Ուրեմն մենք բոլորս՝ որ կատարեալ ենք՝ մտածենք այսպէս. իսկ եթէ տարբեր կերպով մտածէք բանի մը մասին, Աստուած զայն ալ պիտի յայտնէ ձեզի:

16Սակայն ի՛նչ աստիճանի որ հասած ենք՝ ընթանա՛նք նոյն կանոնին համաձայն, մտածե՛նք նոյնպէս:

17Եղբայրնե՛ր, բոլորդ միասին նմանեցէ՛ք ինձի, եւ ուշադի՛ր եղէք անո՛նց՝ որ կ'ընթանան այնպէս՝ ինչպէս մենք, որ ունիք իբր տիպար: **18**Որովհետեւ շատեր կ'ընթանան, որոնց մասին յաճախ կ'ըսէի ձեզի եւ հիմա կ'ըսեմ՝ նոյնիսկ լալով, այսինքն՝ Քրիստոսի խաչին թշնամիները. **19**անոնց վախճանը կորուստ է, անոնց աստուածը՝ իրենց որովայնն է, ու անոնց փառքը՝ իրենց ամօթն է: Անոնք կը մտածեն միայն երկրային բաներու մասին. **20**իսկ մեր քաղաքացիութիւնը երկինքն է, ուրկէ կը սպասենք Փրկիչին՝ Տէր Յիսուս Քրիստոսի, **21**որ պիտի կերպարանափոխէ մեր նուաստացած մարմինը՝ կերպարանակից ըլլալու իր փառաւոր մարմնին, այն ներգործութեան համեմատ՝ որ կարող է նաեւ ամէն ինչ հպատակեցնել իրեն:

4.1Յետեւաբար, սիրելի ու կարօտալի եղբայրնե՛րս, իմ ուրախութիւնս ու պսակս, ա՛յսպէս հաստատուն կեցէք Տէրոջմով, սիրելիներս:

2Կ'աղաչե՛մ Եւոզիայի ու կ'աղաչե՛մ Սիւնտիքի, որ ունենան միեւնոյն մտածումը Տէրոջմով: **3**Եւ կը խնդրեմ քեզմէ՛ ալ, իմ հարազատ լծակիցս, օգնէ՛ ասոնց՝ որ աւետարանին համար մարտնչեցան ինձի հետ, նաեւ Կղեմէսի եւ միւս գործակիցներու հետ, որոնց անունները կեանքի գիրքին մէջ են:

4Ամէն ատեն ուրախացէք Տէրոջմով. դա՛րձեալ կ'ըսեմ, ուրախացէ՛ք: **5**Ձեր ազնուութիւնը թող յայտնի ըլլայ բոլոր մարդոց. Տէրը մօտ է: **6**Մի՛ մտահոգուիք որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէ՛ք ձեր խնդրանքները Աստուծոյ. **7**եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ գերիվեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով:

8Վերջապէս, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ՝ պատկառելի, ինչ որ՝ արդար, ինչ որ՝ անկեղծ, ինչ որ՝ սիրալիր, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ առաքինութեամբ եւ ինչ որ գովելի է, ատո՛նց մասին մտածեցէ՛ք: **9**Ինչ որ սորվեցաք, ընդունեցիք, լսեցիք ու տեսաք իմ վրաս՝ զանո՛նք ըրէք, եւ խաղաղութեան Աստուածը պիտի ըլլայ ձեզի հետ:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 17.20-18.14

20Երբ Փարիսեցիները հարցուցին իրեն. «Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ», պատասխանեց անոնց. «Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն երեւցած բաներով: **21**Եւ պիտի չըսեն. “Ահա՛ հոս է”, կամ. “Ահա՛ հոն”. որովհետեւ ահա՛ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսն է»:

22 Աշակերտներուն ալ ըսաւ. «Օրե՛ր պիտի գան, երբ դուք պիտի ցանկաք տեսնել մարդու Որդիին օրերէն մէկը, բայց պիտի չտեսնէք: **23** Ու եթէ ըսեն ձեզի. “Ահա՛ հոս է”, կամ. “Ահա՛ հոն”, մի՛ երթաք եւ հետամուտ մի՛ ըլլաք: **24** Որովհետեւ ինչպէս փայլակը՝ երկինքին տակ մէկ ծայրէն փայլատակելով՝ կը լուսաւորէ մինչեւ երկինքին տակ միւս ծայրը, նո՛յնպէս պիտի ըլլայ մարդու Որդին՝ իր գալուստին օրը: **25** Սակայն պետք է որ ինք նախ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս սերունդէն: **26** Ի՛նչպէս պատահեցաւ Նոյի օրերուն, այնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին օրերուն ալ: **27** Կ’ուտէին, կը խմէին, կ’ամուսնանային, ամուսնութեան կու տային, մինչեւ այն օրը՝ երբ Նոյ մտաւ տապանը, ու ջրհեղեղը եկաւ եւ կորսնցուց բոլորը: **28** Նմանապէս՝ ինչպէս Ղովտի օրերուն ալ պատահեցաւ՝ կ’ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին, կը կառուցանէին: **29** Բայց այն օրը՝ երբ Ղովտ դուրս ելաւ Սոդոմէն, երկինքէն կրակ ու ձմու՛ք տեղաց եւ կորսնցուց բոլորը: **30** Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը՝ երբ մարդու Որդին յայտնուի: **31** Այդ օրը, ա՛ն որ տանիքին վրայ է եւ իր կարասիները՝ տան մէջ, թող չիջնէ՛ զանոնք առնելու. նմանապէս ա՛ն որ արտին մէջ է՝ թող չվերադառնայ: **32** Յիշեցէ՛ք Ղովտի կինը: **33** Ո՛վ որ ջանայ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ պիտի ապրեցնէ զայն: **34** Կը յայտարարեմ ձեզի. “Այդ գիշերը եթէ երկու անձեր մէկ մահիճի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը մնայ. **35** եթէ երկու կիներ միասին աղան, մէկը պիտի առնուի եւ միւսը մնայ. եթէ երկու մարդիկ արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը մնայ”»: **36** Անոնք պատասխանեցին անոր. «Տէ՛ր, ո՛ր պիտի ըլլայ այս բանը»: **37** Ան ալ ըսաւ անոնց. «Ո՛ր մարմին կայ, հոն պիտի հաւաքուին արժիւնները»:

18.1 Առակ մըն ալ ըսաւ անոնց, որ գիտնան թէ պետք է ամէ՛ն ատեն աղօթել՝ առանց ձանձրանալու: **2** Ըսաւ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդ չէր յարգեր: **3** Նոյն քաղաքին մէջ այրի մըն ալ կար, որ կու գար անոր եւ կ’ըսէր. “Պաշտպանէ՛ իմ իրաւունքս՝ ոսոխիս դէմ”: **4** Ան ժամանակ մը չէր ուզեր անոր մտիկ ընել. բայց յետոյ ըսաւ ինքնիրեն. “Թէպէտ Աստուծմէ չեմ վախնար ու մարդ չեմ յարգեր, **5** գո՛նէ պաշտպանեմ այս այրիին իրաւունքը՝ զիս անհանգստացնելուն համար, որպէսզի չգայ ամեն ատեն թախանձէ ինձի”»: **6** Եւ Տէրը ըսաւ. «Լսեցէ՛ք ի՛նչ կ’ըսէ անիրաւ դատաւորը: **7** Յապա Աստուած պիտի չպաշտպանէ՛ իր ընտրեալներուն իրաւունքը, որոնք կը գոչեն իրեն ցերեկ ու գիշեր, թէեւ համբերատար ըլլայ անոնց հանդէպ: **8** Կը յայտարարեմ ձեզի թէ շուտո՛վ պիտի պաշտպանէ անոնց իրաւունքը. բայց երբ մարդու Որդին գայ, արդեօք հաւատք պիտի գտնե՞ր կրի վրայ»:

9 Սա՛ առակն ալ ըսաւ ոմանց, որոնք իրենք իրենց վրայ կը վստահէին թէ արդար են, եւ կ’անարգէին ուրիշները. **10** «Երկու մարդ տաճարը բարձրացաւ աղօթելու, մէկը՝ Փարիսեցի, ու միւսը՝ մաքսաւոր: **11** Փարիսեցին կայնած էր եւ սա՛պէս կ’աղօթէր ինքնիրեն. “Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ՛ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, կամ ալ այս մաքսաւորին պէս. **12** հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, եւ ամբողջ եկամուտիս տասանորդը կու տամ”: **13** Իսկ մաքսաւորը հեռուն կայնած էր, ու չէր ուզեր աչքն ալ բարձրացնել երկինք, հապա՛ ձեռնելով իր կուրծքը՝ կ’ըսէր. “Աստուա՛ճ, ներէ՛ ինձի՝ մեղաւորիս”: **14** Կը յայտարարեմ

ձեզի թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իջաւ իր տունը. որովհետեւ ո՛վ որ կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»:

Luke 17.20-18.14

20 And when he was demanded of the Pharisees, when the kingdom of God should come, he answered them and said, The kingdom of God cometh not with observation: **21** Neither shall they say, Lo here! or, lo there! for, behold, the kingdom of God is within you. **22** And he said unto the disciples, The days will come, when ye shall desire to see one of the days of the Son of man, and ye shall not see it. **23** And they shall say to you, See here; or, see there: go not after them, nor follow them. **24** For as the lightning, that lighteneth out of the one part under heaven, shineth unto the other part under heaven; so shall also the Son of man be in his day. **25** But first must he suffer many things, and be rejected of this generation. **26** And as it was in the days of Noe, so shall it be also in the days of the Son of man. **27** They did eat, they drank, they married wives, they were given in marriage, until the day that Noah entered into the ark, and the flood came, and destroyed them all. **28** Likewise also as it was in the days of Lot; they did eat, they drank, they bought, they sold, they planted, they builded; **29** But the same day that Lot went out of Sodom it rained fire and brimstone from heaven, and destroyed them all. **30** Even thus shall it be in the day when the Son of man is revealed. **31** In that day, he which shall be upon the housetop, and his stuff in the house, let him not come down to take it away: and he that is in the field, let him likewise not return back. **32** Remember Lot's wife. **33** Whosoever shall seek to save his life shall lose it; and whosoever shall lose his life shall preserve it. **34** I tell you, in that night there shall be two men in one bed; the one shall be taken, and the other shall be left. **35** Two women shall be grinding together; the one shall be taken, and the other left. **36** Two men shall be in the field; the one shall be taken, and the other left. **37** And they answered and said unto him, Where, Lord? And he said unto them, Wheresoever the body is, thither will the eagles be gathered together.

18.1 And he spake a parable unto them to this end, that men ought always to pray, and not to faint; **2** Saying, There was in a city a judge, which feared not God, neither regarded man: **3** And there was a widow in that city; and she came unto him, saying, Avenge me of mine adversary. **4** And he would not for a while: but afterward he said within himself, Though I fear

not God, nor regard man; ⁵ Yet because this widow troubleth me, I will avenge her, lest by her continual coming she weary me. ⁶ And the Lord said, Hear what the unjust judge saith. ⁷ And shall not God avenge his own elect, which cry day and night unto him, though he bear long with them?

⁸ I tell you that he will avenge them speedily. Nevertheless when the Son of man cometh, shall he find faith on the earth?

⁹ And he spake this parable unto certain which trusted in themselves that they were righteous, and despised others: ¹⁰ Two men went up into the temple to pray; the one a Pharisee, and the other a publican. ¹¹ The Pharisee stood and prayed thus with himself, God, I thank thee, that I am not as other men are, extortioners, unjust, adulterers, or even as this publican. ¹² I fast twice in the week, I give tithes of all that I possess. ¹³ And the publican, standing afar off, would not lift up so much as his eyes unto heaven, but smote upon his breast, saying, God be merciful to me a sinner.

¹⁴ I tell you, this man went down to his house justified rather than the other: for everyone that exalteth himself shall be abased; and he that humbleth himself shall be exalted.

Philippians 3.1-4.9

3.1 Finally, my brethren, rejoice in the Lord. To write the same things to you, to me indeed is not grievous, but for you it is safe.

² Beware of dogs, beware of evil workers, beware of the concision. ³ For we are the circumcision, which worship God in the spirit, and rejoice in Christ Jesus, and have no confidence in the flesh. ⁴ Though I might also have confidence in the flesh. If any other man thinketh that he hath whereof he might trust in the flesh, I more: ⁵ Circumcised the eighth day, of the stock of Israel, of the tribe of Benjamin, an Hebrew of the Hebrews; as touching the law, a Pharisee; ⁶ Concerning zeal, persecuting the church; touching the righteousness which is in the law, blameless.

⁷ But what things were gain to me, those I counted loss for Christ. ⁸ Yea doubtless, and I count all things but loss for the excellency of the knowledge of Christ Jesus my Lord: for whom I have suffered the loss of all things, and do count them but dung, that I may win Christ, ⁹ And be found in him, not having mine own righteousness, which is of the law, but that which is through the faith of Christ, the righteousness which is of God by faith: ¹⁰ That I may know him, and the power of his resurrection, and the fellowship of his sufferings, being made

conformable unto his death; ¹¹ If by any means I might attain unto the resurrection of the dead.

¹² Not as though I had already attained, either were already perfect: but I follow after, if that I may apprehend that for which also I am apprehended of Christ Jesus. ¹³ Brethren, I count not myself to have apprehended: but this one thing I do, forgetting those things which are behind, and reaching forth unto those things which are before, ¹⁴ I press toward the mark for the prize of the high calling of God in Christ Jesus. ¹⁵ Let us therefore, as many as be perfect, be thus minded: and if in any thing ye be otherwise minded, God shall reveal even this unto you. ¹⁶ Nevertheless, whereto we have already attained, let us walk by the same rule, let us mind the same thing.

¹⁷ Brethren, be followers together of me, and mark them which walk so as ye have us for an ensample. ¹⁸ (For many walk, of whom I have told you often, and now tell you even weeping, that they are the enemies of the cross of Christ: ¹⁹ Whose end is destruction, whose God is their belly, and whose glory is in their shame, who mind earthly things.) ²⁰ For our conversation is in heaven; from whence also we look for the Saviour, the Lord Jesus Christ: ²¹ Who shall change our vile body, that it may be fashioned like unto his glorious body, according to the working whereby he is able even to subdue all things unto himself.

4.1 Therefore, my brethren dearly beloved and longed for, my joy and crown, so stand fast in the Lord, my dearly beloved.

² I beseech Euodias, and beseech Syntyche, that they be of the same mind in the Lord. ³ And I intreat thee also, true yokefellow, help those women which laboured with me in the gospel, with Clement also, and with other my fellowlabourers, whose names are in the book of life.

⁴ Rejoice in the Lord always: and again I say, Rejoice. ⁵ Let your moderation be known unto all men. The Lord is at hand. ⁶ Be careful for nothing; but in every thing by prayer and supplication with thanksgiving let your requests be made known unto God. ⁷ And the peace of God, which passeth all understanding, shall keep your hearts and minds through Christ Jesus.

⁸ Finally, brethren, whatsoever things are true, whatsoever things are honest, whatsoever things are just, whatsoever things are pure, whatsoever things are lovely, whatsoever things are of good report; if there be any virtue, and if there be any praise, think on these things.

⁹ Those things, which ye have both learned, and received, and heard, and seen in me, do: and the God of peace shall be with you.

ՏՕՆԵՐ

10 Մարտ 2018

Սուրբ Քառասուն

Մանկանց

Յիշատակութեան Օր




4-րդ դարու սկիզբը նահատակուած 40 վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներէն էին եւ զինուորական ծառայութեան մէջ էին Սեբաստիա քաղաքի կայսրական գունդին մէջ: Երբ Լիկիանոս կայսրի հրամանով Կեսարիայի Դուքս Լիւսիանը կը հարցաքննէ՝ բանակին մէջ Քրիստոնէայ զինուորներ յայտնաբերելու նպատակով, անոնցմէ 40-ը, հաւատարիմ իրենց հաւատքին, անվեհեր պատասխաններով դատաւորներուն զայրոյթ յառաջացուցին եւ այդ պատճառով ալ բանտարկուեցան: Ձմեռնային ցուրտ գիշեր մը անոնց կը նետեն Սեբաստիա քաղաքին մօտ գտնուող լիճը: 40-էն միայն մէկը չկարողանար տանջանքներուն դիմանալ: Դուքս ելլելով սառած ջուրէն, ան կը փորձէ փրկութիւն գտնել լճափին կառուցուած տան մէջ, սակայն կը ընկնէ մահկանացուն, կը զրկուի թէ՛ երկրային, թէ՛ երկնային կեանքէն: Լուսադէմին միւս բոլոր նահատակները կ'երեւին լուսապսակներով զարդարուած: Պահապան զինուորներէն մէկը, տեսնելով այդ, կը լեցուի Քրիստոսի հաւատքով եւ նետուելով լիճը, պսակակից կը դառնայ անոնց: Աստուածային հրաշքով ձմեռնային սառնամանիքին դիմակալած վկաները առաւօտեան կը նահատակուին: Անոնց նշխարները կ'ամփոփուին Սեբաստիոյ մէջ, ուր եւ հետագային կը կառուցուի Քառասուն մանկունքի 40 գմբեթանի տաճարը, որ կանգուն կը մնայ մինչեւ Լենկթիմուրի արշաւանքը: 40 մանկանց պատմութիւնը կը յորդորէ կեանքի բոլոր դժուարութիւններուն մէջ անգամ հաւատարիմ մնալ Քրիստոսի հաւատքին, յաղթահարել դիւրահաճ գայթակղութիւնները՝ երկնային պսակին արժանանալու համար:

11 Մարտ 2018

Դատաւորի Կիրակի

Մեծ Պահքի Զինգերորդ Կիրակին կը կոչուի Դատաւորի: Այդ օրուան խորհուրդը կը բացատրէ այրի կնոջ եւ դատաւորի մասին առակը (Ղուկ. 18: 1-5): Ըստ առակին՝ այրի կին մը, անընդհատ կը խնդրէ Աստուծմէ չերկնչող եւ մարդոցմէ չվախցող դատաւորին՝ իր դատը ընելու: Դատաւորը կնոջմէ ազատուելու համար ստիպուած կը բաւարարէ անոր պահանջքը: Այս առակը պատմելէն յետոյ Քրիստոս կը հաւաստիացնէ բոլորին, որ եթէ անարդար դատաւորը այրի կնոջ դատը տեսաւ, ապա Աստուած առաւել եւս կը կատարէ բոլոր անոնց խնդրանքները, որոնք միշտ աղօթքով կը խնդրեն:



Առակը կը յորդորէ ամէն ժամ աղօթել, որ կը խորհրդանշէ հոգիի մշտական մղումը առ Աստուած, բայց միեւնոյն ժամանակ իրական աղօթքի կոչ է: Առակը պատմելէն յետոյ Քրիստոս կ'ըսէ. Իսկ երբ մարդու Որդին գայ, արդեօ՞ք երկրի վրայ հաւատք կը գտնէ (Ղուկ. 18: 8): Առակին մէջ Յսուսը կու տայ երկրորդ գալստեան գաղափարը: Տիրոջ բառերուն մէջ տխրութիւն եւ թախիծ կը զգացուի: Փրկիչին համար ցաւալի է, որ շատ մարդիկ մը կրնան ենթարկուիլ Ահեղ դատաստանի՝ արքայութեան ժառանգորդներ ըլլալու փոխարէն:



Holidays

2018-03-10

Commemoration of the Forty Holy Martyrs

The Forty Holy Martyrs martyred in approximately 320 AD were Christians from various towns and cities of Lesser Armenia. They served as soldiers in the royal regiment of Sebastia. Upon the decree of Roman Emperor Licianus, interrogations were organized by Lucias, Duke of Caesarea, to reveal the Christian soldiers. Forty of the soldiers remain steadfast in their faith, defy the judges by their brave answers, and are imprisoned. One cold winter night the soldiers are thrown into a lake near Sebastia, to freeze them to death. Only one of the forty soldiers, being unable to endure the torments, comes out of the water, and tries to find salvation in a bathhouse built on the bank. The lone soldier dies and becomes deprived of both earthly and heavenly life.




At dawn, halos are seen encircling the heads of the soldiers. One of the guards charged with the execution of the forty, witnessing the holy phenomenon accepts Christ and throws himself into the lake to be martyred along with the others. In the morning it becomes apparent that through a divine miracle, the forty soldiers have been saved from freezing. This infuriates their captors who execute them and thus, they become martyrs. The martyrs' remains are buried in Sebastia, where subsequently a Forty-domed Cathedral is built. The Cathedral of Sebastia stood for nearly one thousand years until the invasion of Tamerlane and the Mongols at the end of the 14th Century. The name of the "Forty Martyrs Cathedral" has survived to this day.



2018-03-11

Sunday of the Judge

The fifth Sunday of Great Lent is called the Sunday of the Judge. The message of the day teaches us with the parable of the widow and the Judge. This parable comes to us in the Gospel of St. Luke (Luke 18:1-8). The parable tells the story of a widow who repeatedly came to a judge, who neither feared God nor respected man, and pled for her rights. For a long period of time the judge refused to act,



but in the end, he fulfilled her request, to put an end to her continuous appeals. Otherwise, he feared that she would continue to return indefinitely.

After telling this parable, the Lord assures everyone, that if a man as corrupt and unfair as this judge decided in favor of the widow, then God surely would judge in favor of his own people and grant the requests of all those who submit to Him through prayer. This parable exhorts us to always and continually pray, as prayer symbolizes the soul's eternal striving and thirst for God. The parable also contains an appeal from Christ. After telling the parable, Christ says: "But will the Son of Man find faith on earth when He comes?" In His words, Jesus gives a reference to the Second Coming, and sadness and anguish are felt in the Lord's remark. It is truly painful for the Savior that many people may be subject to just, yet cruel judgment, instead of becoming the inheritors of the Kingdom of God.



Armenian Lenten Services

The Peace Service, Rest Service and Sunrise Service are performed more often during Great Lent than at other times of the year.

(Usually, Peace and Rest Services are performed only on Friday evenings.)

These three services are part of the Church's cycle of seven daily worship services but are of particular significance during Great Lent because they are penitential in nature and remind us of the effort we are making to restore our pure and joyous relationship with God. The evening Peace Service consists of prayers for peace to end each day. These prayers remind us that God is with us even in the face of trial and temptation.

The Rest Service, which comes just before retiring for the night, asks God's continuing care through the night. It includes the prayer of St. Nersess.

The Sunrise Service, performed first thing in the morning, reminds us that God is the giver of the light of morning and the light of salvation.

Its beautiful prayers and hymns reflect the fresh and serene quality of the most beautiful time of day.

This service is performed in our churches before or after Sunday morning liturgy.



Ե. Շաբաթ Քառասնորդաց

Քառասնորդաց Յինգերորդ շաբաթը Անիրաւ Դատաւորի նուիրուած շաբաթն է. Անշուշտ օրինակը որ մեզի կ'ուզէ տալ Քրիստոս այս առակով դատաւորը չէ, այլ աղքատ այրի կինը, որ չի դադրիր աղօթելէ եւ պաղատելէ որպէսզի իր դատը տեսնուի եւ իր իրաւունքը կարենայ ստանալ:

Որքա՛ն անձեր աշխարհիս վրայ

իրաւագրկուած կը մնան, կամ որովհետեւ դատաւորը անարդար է, կամ որովհետեւ հարկ եղած միջոցները չունին իրենք զիրենք յարմարագոյն կերպով պաշտպանելու: Այսօրուայ առակին մէջ՝ այս երկու պարագաներն ալ իրարու կը հանդիպին, սակայն ի վերջոյ այրին իր իրաւունքին տէր կը դառնայ շնորհիւ իր անձանձրոյթ յարատեւութեան:

Առակի վերջաւորութեան՝ Քրիստոս հարցում մը կ'ընէ որ տեղին է, մանաւանդ այս օրերուս համար: Կը հարցնէ. Երբ Մարդու Որդին գայ, աշխարհիս վերջաւորութեան, տակաւին հաւատք պիտի գտնէ՞ աշխարհիս վրայ: Յիսուս հաւատքի մասին կը խօսի, որովհետեւ աղօթքի միջոցաւ է որ հաւատքը կը զօրանայ եւ աւելի կը հաստատուի:

Ուստի աղօթքը, մանաւանդ յարատեւ աղօթքը, հաւատացեալին մէջ կը յառաջացնէ գիտակից հաւատք մը, որ զինք կը դարձնէ կարող միշտ մօտ ըլլալու Աստուծոյ եւ գործելու անոր սուրբ կամքին համաձայն:

Շաբաթ 10 Մարտին՝ տօնն է Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Մուտքին Խոր Վիրապին մէջ: Նոյն Սուրբի երեք տօներուն առաջինն է, որ կը յիշեցնէ մեզի իր չարչարանքներն ու բանտարկութիւնը 13 տարիներ ամբողջ՝ մուր զնտանի մը մէջ:



Կիրակի 25 Մարտը՝ 2. Կիրակին քառասնորդաց, «Գալստեան» Կիրակի Է:



Bible Reading Plan

elctacoma.org

JONAH

Monday 11/27 | **Jonah** 1-4

Tuesday 11/28 | **Luke** 11 & **Matthew** 16

Wednesday 11/29 | **Jonah** 1 & **Matthew** 28

Thursday 11/30 | **Jonah** 2 & **James** 1

Friday 12/1 | **Jonah** 3 & **Isaiah** 52:1-12

Saturday 12/2 | **Jonah** 4 & **Psalms** 86

Sunday 12/3 | **Psalms** 145

ԺԱՄԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Կիրակի, 11 Մարտ 2018-ի առաւօտեան ժամը 2-ին ժամացոյցներու սլաքները կ'ուղղուին 1 ժամ յառաջացումով:

Կիրակի, 11 Մարտ 2018 առաւօտեան ժամը 2-ի փոխարէն պիտի ըլլայ առաւօտեան ժամը 3-ը:

Spring forward

Don't forget to set clocks ahead one hour at 2 a.m. Sunday.



March 11, 2018 - Daylight Saving Time Starts

Forward 1 hour

Sunday, March 11, 2018, 2:00 am clocks are turned forward 1 hour to Sunday, March 11, 2018, 3:00 am local daylight time instead.

Ժամը փոխելու այս գաղափարը կոր չէ. սակայն երկար ժամանակ առաժ Է գայն կիրարկելու համար:

Ժամերու այս փոփոխութիւնը տեղի կ'ունենայ տարին երկու անգամ: Սակայն երկիրները վերջապէս կ'որոշեն այս դրութիւնը հաստատել Ա. Զամաշխարհային պատերազմին: Առաջին երկիրը կ'ըլլայ Գերմանիան, որ իր ժամը կը փոխէ 30 ապրիլ 1916-ին, ապա անոր կը հետեւին Անգլիան եւ Ֆրանսան:

Սակայն այս դրութիւնը կը ջնջուի Բ. Զամաշխարհային պատերազմին սկիզբը, մինչ Անգլիա եւ Իրլանտա կը շարունակեն գայն կիրարկել: Ժամանակի ընթացքին բազմաթիւ երկիրներ կը վերահաստատեն այս դրութիւնը, եւ 1980-ական թուականներէն սկսեալ անիկա վերջնականապէս կ'ընդունուի երկիրներուն մեծ մասին կողմէ: Այս ձեւով, մենք մեր ժամացոյցները կը փոխենք Զոկտեմբերի եւ Մարտի վերջին Կիրակիներուն, մինչ Զայաստան այս դրութիւնը ջնջած է 2012 թուականէն ի վեր:



**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Pastor and Parish Council

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of March 2018
have been received with great appreciation***



CHURCH:

Mr. Noubar Babikian \$30

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE LEVON GURNAGUL

Mr. & Mrs. Norayr & Paylin Gurnagul,

Mrs. Siruhi Gurnagul \$300, Mr. & Mrs Gilbert & Reena Migirditsian \$200,

Mr. & Mrs. Sarkis Gurnagul \$150, Mr. Toros Kilavuz,

Mr. Ovagin Gurnagul,

Mr. & Mrs. Robert Kilavuz \$100, Mr. & Mrs. Herman Minasyan \$75,

Mrs. Annait Migirditsian, Mr. & Mrs. Migirdic Sahakian,

Mr. & Mrs. Anoush & Hagop Kazan, Mrs. Verjin Kurkcuoglu,

Mrs. Knar Kinargozbak, Mr.& Mrs. Nazaret Sahakian,

Mr. & Mrs. Krikor & Siran Yasa, Mr.& Mrs. Harry Pinejian,

Mr. & Mrs. Murat & Nadya Armutlu \$50,

Mr. & Mrs. Artin & Manusak & Shushan Gurnagul,

Mr. & Mrs. Vahakn & Lucy Arapyan,

**Mrs. Marie Kasbarian, Mrs. Lucie Kasparian \$40,
Mrs. Verjine Asaduryan,
Mr. & Mrs. Berdj Kermezian, Mrs. Hermine Chadakhtzian \$30,
Mrs. Seta Saroyan \$25, Mr. & Mrs. Toros & Ayda Keskinbicak \$20**

HOKEHANKISD:

THE LATE ANOUSH BOGHOSSIAN

**Mr. Puzant Boghossian \$200, Mr. Vekine Boghossian,
Mr. & Mrs. Melkon Boghossian \$100**

THE LATE TASCIYAN FAMILY

Mr. & Mrs. Aret Tasciyan \$200

THE LATE DERKEVORKIAN FAMILY

**Dr. & Mrs. Hrair & Manoush Derkevorkian \$100,
Mr. & Mrs. Avedis & Arsho Djihanian \$50**

THE LATE MARTHA TRIEMER YEGHIAYAN

**Mrs. Alice Yeghiayan, Mr. Berdj Kupelian \$50,
Mr. Aram Masseredjian \$40**

THE LATE ARPINE ASTOURIAN

Mrs. Seta Astourian \$60


THE LATE VAHAN TOUKHIAN

Mr. Vrej Toukhian \$10



ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 11 Մարտ 2018



Առաջնորդ Սրբազան Զոր, Ծխական Խորհուրդին,
Տիկնանց Յանձնախումբին եւ Յարակից Մարմիններուն,
Պոլսահայ Մշակութային Միութեան Վարչութեան,
Տիար Վրեժ Նիկողոսեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ,

**Եկեղեցւոյ եւ Ազգային
Բարերարուհի՝**

**ԻՄԱՍՏՈՒՅԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ
(IMASDUHI NIGOGOSSIAN)**

մահուան առաջին տարելիցին առիթով
(Յոգեճաշի սպասարկութիւն «Մարի Մանուկեան» սրահին մէջ)



Առաջնորդ Սրբազան Զոր, Զոգեւոր Զովիւի, Ծխական Խորհուրդի եւ
Յարակից Մարմիններուն,
Տիար Վահան Էվրէնսէլի,
Տ. եւ Տիկ. Յակոբ եւ Արաքսի Էվրէնսէլի,
Տ. եւ Տիկ. Արթօ եւ Մարիսա Էվրէնսէլի,
Տ. եւ Տիկ. Արմէն եւ Ժանին Էվրէնսէլի,
Եւ թոռներուն՝ Լիւք Էվրէնսէլի եւ Ֆրանքա Լուսին Էվրէնսէլի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ Եկեղեցւոյ
«Էջմիածնայ Կրօնասէր Մայրերու Յանձնախումբի
Ատենապետուհի՝

ԱՆԱՀԻՏ ԷՎՐԵՆՍԷԼ

(ANAHIT EVRENSEL)

մահուան 40-ին առիթով



Տիկին Արշալոյս Կերկերի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իր սիրեցեալ ամուսնոյն՝

ՊԱՐՍՈՒՄ ԿԵՐԿԵՐԻ

(BARSUM GERGER)

մահուան 24-րդ տարելիցին առիթով





Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Ձեռնարկ
	10, Շաբաթ Առաւօտեան ժամը 11:00- ին	Արեւագալի Ժամերգութիւն եւ Միջինքի հիւրասիրութիւն Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ Լաւալ
	14, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հ սկում Պահոց Ընթրիք Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք
	17, Շաբաթ	Ս. Գրիգոր Լուսաւորիչի Վիրապ Մտնելու Յիշատակութեան Օր
	21, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում Պահոց Ընթրիք Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

	25, Կիրակի	Ճաղկագարդ
	29, Հինգշաբթի	Աւագ Հինգշաբթի Ոտնլուայ Երեկոյեան ժամը 7:00-ին Աւագ Հինգշաբթիի Ընթրիք Տիկնանց Յանյնախումբ «Մարի Մանուկեան» սրահ Խաւարման Գիշեր
	30, Աւագ Ուրբաթ	Կարգ Թաղման Երեկոյեան ժամը 7- ին
	31, Շաբաթ	«Ճրագալոյց» Ս. Չատկուայ
Ապրիլ	1, Կիրակի	Ս. Չատիկ Չատկուայ Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	2, Երկուշաբթի	Մեռելոց Հոգեհանգիստ
	24, Երեքշաբթի	Մեծ Եղեռնի Յիշատակի Օր
Մայիս	10, Հինգշաբթի	Համբարձման Տօն «Մարի Մանուկեան» Ճաշկերոյթ եւ վիճակ

	13, Կիրակի	Մայրերու Օր
	25, 26, 27 Ուրբ., Շբթ., Կիր.	35-րդ Պատգամաւորական Ժողով Ս. Վարդան Եկեղեցւոյ մէջ Վանքովըր
Յունիս	3, Կիրակի	Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն Եկեղեցւոյ Անուանակոչութիւն Մատաղօրհներ
Յուլիս	8, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Ջրօրհներ Վարդավառ
	9, Երկուշաբթի	Մեռելոց Յոգեհանգիստ
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխում» Ս. Աստուածածնի Խ աղոթօրհներ – (ճաշկերոյթ) Ս. Մանուկեան
Սեպտեմբեր	9, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ

Նույնաբեր	Թուականը յաջորդի	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Խ թախճանք CFFA «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ





Եկեղեցւոյ Ձեռնարկներ

Կիրակի, 25 Մարտ 2018 – ԾԱՂԿԱԶԱՐԴ – Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Աւագ Հինգշաբթի, 29 Մարտ 2018 – ՈՏՆԼՈՒԱՅ – երեկ. Ժամը 7-ին:
ՊԱՀՈՑ ԸՆԹՐԻՔ երեկ. Ժամը 8-ին «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Աւագ Ուրբաթ. 30 Մարտ 2018 – ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ – երեկ. Ժամը 7-ին:

Շաբաթ, 31 Մարտ 2018 – ՃՐԱԳԱԼՈՅՅ – երեկ. Ժամը 6-ին:

Կիրակի, 1 Ապրիլ 2018 – ԶԱՏԻԿ - Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահին մէջ

Կիրակնօրեայ Վարժարան - Կիրակի, առաւօտեան Ժամը 11-էն սկսեալ
Ուսուցչուհի Շողիկ Գուշաբճեանի հետ

CHURCH UPCOMING EVENTS

Sunday March 25, 2018 – PALM SUNDAY – Lunch - “Marie Manoogian’ Hall

Maundy Thursday – March 29, 2018 – FEET WASHING – at 7:00 pm

LENT DINNER at 8:00 pm – “Marie Manoogian” Hall

Good Friday – March 30, 2018 – BURIAL - at 7:00 pm

Saturday – March 31, 2018 – EASTER EVE – at 6:00 pm

Sunday – April 1, 2018 – EASTER – Festive Lunch – “Marie Manoogian” Hall

Sunday School - Every Sunday at 11:00 am with Shoghig Koushakjian, Teacher



Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).



Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.

Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.

**Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège
Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.**

La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):

Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:



Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորաները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Ղայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիսական Խորհուրդ



ԽԱՂԱՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

*Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին
(Փետրուար 14 – Մարտ 29)*

Փետրուար 14 – Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան
Առաջնորդ Գանատահայոց Թեմի
Պահոց Ընթրիք – Տիգրանեան Ընտանիք

Փետրուար 21 – Արժ. Տ. Միւռոն Քհնյ. Սարգիսեան
Հոգեւոր Հովիւ- Միսիսոկայի Ս. Վարդան Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Փառանձեմ եւ Շողիկ Գրիգորեան

Փետրուար 28 – Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան
Հոգեւոր Հովիւ- Լաւայի Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Թերեան Մշակութային Միութիւն

Մարտ 7 – Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան
Առաջնորդ Գանատահայոց Թեմի
Պահոց Ընթրիք – Տէր եւ Տիկին Ասպետ եւ Միրնա Պաճաքեան

Մարտ 14 – Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան
Հոգեւոր Հովիւ- Լաւայի Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Տիկ. Սոնիա Գալայճեան եւ Ընտանիք

Մարտ 21 – Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Պոյաճեան
Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Մարտ 29 – Աւագ Հինգշաբթի
Աւագ Հինգշաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ



ԾԱՂԿԱԶԱՐԴ

PALM SUNDAY

Մանուկներու Օրհնութեան Օր - Children's Blessing Day

Ս. ՊԱՏԱՐԱԳ / DIVINE LITURGY

Կիրակի, 25 Մարտ 2018

Sunday, March 25, 2018

Առաւօտեան ժամերգութիւն / Morning Mass – 9:30

Ս. Պատարագ / Divine Liturgy – 10:30

Ս. Պատարագի աւարտին

Following the service

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ

ՕՐՅՆՈՒԹԻՒՆ/CHILDREN'S BLESSING

Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահին մէջ

Lunch in 'Marie Manoogian' hall

ԱՐԺ. Տ. ՎԱԶԳԷՆ ԲՅՆՅ. ՊՈՅԱԾԵԱՆ

Պիտի ներկայացնէ

CYMA 2017-ի Երիտասարդաց Առաքելութիւնը


CYMA 2017 Youth Project Presentation

REV. FR. VAZGEN BOYAJYAN

Տեղերու ապահովման համար հեռաձայնել Եկեղեցոյ

գրասենեակ / For reservation call to the Church

(514) 279-3066 - Մուտքի Նուէր՝ / Entrance Fee \$20



Ս. ՉԱՏԻԿ / EASTER

ԿԻՐԱԿԻ, 1 Ապրիլ 2018

SUNDAY, April 1, 2018



Առաւօտեան ժամերգութիւն ժամը / Morning Mass - 9:30
Ս. Պատարագ ժամը / Divine Liturgy - 10:30

Պատարագիչ՝
ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Celebrant
HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMIAN
Primate of the Armenian Diocese of Canada

Ս. Պատարագի Երգեցողութիւնը կը կատարէ
«Կոմիտաս» Դպրաց Դաս / Երգչախումբը
The singing of the Divine Liturgy will be performed by
“Komitas” Choir

Յաւարտ Ս. Պատարագի Ս. Չատկուայ ճաշկերոյթ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Following the Divine Liturgy Easter
lunch will be held in 'Marie
Manoogian' hall

Սիրով կ'ողջունենք հաւատացեալ
մեր ժողովուրդին
մասնակցութիւնը Սուրբ Չատկուայ
Պատարագին:

We will gladly accept the attendance of our beloved
parishioners in the Divine Liturgy.

Մուտքի նուէր՝ \$25 / Entrance Fee \$30

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՌԻՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՈՆԵՅԷՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100 ԱՄԵԱԿԸ



PILGRIMAGE TO ARMENIA

CELEBRATE THE CENTENNIAL OF
THE BATTLE OF SARDARAPAT

22.05.2018



PÈLERINAGE EN ARMÉNIE

CÉLÉBREZ LE CENTENAIRE DE LA
BATAILLE DE SARDARAPAT

05.06.2018

25.05.2018






Սարդարապատի Հերոսամարտի
100 Ամեակի Կապակցութեամբ
Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցոյ Գանատահայոց Թեմը
Օրհնութեամբ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերշ. Տ. Արղար Եպիսկոպոս Յովակիմեանի՝
կը կազմակերպէ 14 օրեայ Ուխտազնացութիւն
դէպի Մայր Հայաստան:
Մանրամասնութիւններու համար հաճեցէք
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:

*On the occasion of
the Centennial of the Battle of Sardarapat
the Armenian Diocese of Canada,
with blessings of*

*His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate
is organizing a 14-day pilgrimage to Armenia.
For details, please contact the Diocese.*

*À l'occasion du
Centenaire de la Bataille de Sardarapat,
le Diocèse arménien du Canada
organise un pèlerinage de 14 jours en Arménie,
avec bénédictions du
Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.
Pour plus de détails, veuillez contacter le Diocèse.*



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada» on
Facebook to receive and share
news about the Diocese.



WATCH

a documentary about the 2016 Pilgrimage
to Armenia. Find the «Armenian Diocese
of Canada» Channel on YouTube.



ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՕՆԵՅԷՔ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՐԱՔԻ 100 ԱՄԵԱԿԸ



PILGRIMAGE TO ARMENIA

CELEBRATE THE CENTENNIAL OF
THE BATTLE OF SARDARAPAT

22.05.2018



PÈLERINAGE EN ARMÉNIE

CÉLÉBREZ LE CENTENAIRE DE LA
BATAILLE DE SARDARAPAT

05.06.2018

25.05.2018

PROGRAM



ԾՐԱԳԻՐ



PROGRAMME

Tuesday, 22.05.2018	Departure from Canada.
Wednesday, 23.05.2018	Arrival at Zvartnots airport; Transfer to the Hotel; Matenadaran – Manuscript Depository; Lunch; Tsitsernakaberd - Genocide Museum; Yerevan city tour; Overnight in Yerevan.
Thursday, 24.05.2018	Oshakan; Tomb of St. Mesrop Mashtots; Ashtarak; Lunch; Ohanavank Monastery; Saghmosavank Monastery; Dinner; Overnight in Yerevan.
Friday, 25.05.2018	Geghard Monastery; Lunch; Garni Temple; Vernisazh; Overnight in Yerevan.
Saturday, 26.05.2018	Free Day; Overnight in Yerevan.
Sunday, 27.05.2018	Tsaghkadzor; Lunch; Sevan Monastery; Lake Sevan; Old Dilijan; Haghardzin Monastery; Overnight in Yerevan.
Monday, 28.05.2018	Zvartnotz Cathedral Site; St. Hripsimeh Church; Etchmiadzin Mother Cathedral and Museum; Lunch; Visit to Youth Cultural Center; Sardarapat; Overnight in Yerevan.
Tuesday, 29.05.2018	Khor Virap; Lunch; Noravank; Vayk, Goris; Dinner; Overnight in Artsakh.
Wednesday, 30.05.2018	Stepanakert; Gandzasar; Lunch; Shushi; Dinner; Overnight in Artsakh.
Thursday, 31.05.2018	Tatev Monastery; Lunch; Dinner in Yerevan; Overnight in Yerevan.
Friday, 01.06.2018	Free Day; Overnight in Yerevan.
Saturday, 02.06.2018	Megeryan Carpet; Lunch; Komitas Museum; Cultural Program; Armenian Cognac Factory; Overnight in Yerevan.
Sunday, 03.06.2018	Sanahin; Lunch; Haghat Monastery; Dinner; Overnight in Yerevan.
Monday, 04.06.2018	Free Morning; Farewell Dinner; Overnight in Yerevan.
Tuesday, 05.06.2018	Transfer to the airport; Departure in the evening with the hope to return!

The cost of the program is \$US 1465 (double room) + ticket + travel insurance.

This price includes: 1) Hotel accommodation; 2) Meals as indicated in the above program (alcohol drinks not included); 3) Full comfortable local transportation service and soft drinks during all trips; 4) Transfer to/from tge Airport; 5) Professional guide service and entrance fees to the historical and cultural sites; 6) Insurance of the vehicle and passengers.



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

SUNDAY SCHOOL

On Sunday, September 10, 2017

For the ages of 6-12 years old children

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ
Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Բերվանճեանին (514) 241-9347



In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.

Fun & fascinating consecutive Fieldtrips

For more information and registration call to the Church office (514) 279-3066

Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347
E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostoloic Church of Montreal

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.